սաստանում դեռ ևս չէ երևացել, բայց Արևմտեան Եւրոպայում նա շարունակում է իր սարսափելի աւերմունքները: Նորա առաջին անգամ երևալուց անցել են ընդամենը 14 տարիներ և այդքան միջոցում նա աւերել է Եւրոպայի խաղողի այգիների մօտաւորապես 1/10 մասը. նրա պատճառած վնասը իւրաքանչիւր տարի հասնում է 170 միլիոն ֆրանկի:

Ֆիլօքսերի պատճառած վնասների այսպէս հեռաւոր սաստկանալը աչքի առաջ ունենալով՝ Եւրոպական սեփականատերերը (բացի Ռուսաստանից) 1877 թուին մի պատգամաւորաց ժողով կազմել տուին Նվէյցարիայի Լօզաննա քաղաքում խաղողի հիւանդութեան դէմ կանոններ խորհրդածելու համար և հետևեալ 1878 թուին էլ Գերմանիայի, Աւստրիայի, Սպանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի Պորտուգալիայի և Նվէյցարիայի ներկայացուցիչները մի երկրորդ ժողով (կոնգրես) կազմելով Բերն քաղաքում Ֆիլօքսերի դէմ ընդհանուր նախազգուշութիւններ գործ դնելու համար, մի միջազգային դաշնագրութիւն կապեցին: Այդ դաշնագրութեամբ խաղողի տունկերի ազատ տեղափոխութիւնը արգելված է և թոյլ է տրուած միայն ամուր փաթած արիզիների մէջ խիստ վերահսկողութեան ներքոյ: Եւ այդ կապելու ու ճանապարհային վերահսկողութեան կանոնները որոշ որոշ սահմանված են նոյն դաշնագրութեան (կոնվենցիայի) մէջ: Ռուսաստանը դեռ ևս միացած չէ այդ միջազգային դաշնագրութեան, միայն խաղողի տունկեր արտասահմանից բերելը արգելված է 1873 թուականից: Տնկաստանը ևս, ֆիլօքսերի առիթով, մօտ օրերս արգելց արտասահմանից բոյսեր բերելը:

Ֆիլօքսերի կեանքի պայմանները արդէն բաւականին ուսումնասիրված են բնագէտներից և պարբերական թերթերի մէջ հանդիպում են ժամանակ առ ժամանակ նորա դէմ մաքառելու նորանոր միջոցներ, բայց առ այժմ աւելորդ համարելով դրա վրա երկարացնելը, անցնում եմ խաղողի մի ուրիշ, մեզ յայտնի հիւանդութեան, թողի վրա:

Թողը (Oidium) մեզ լաւ յայտնի խաղողի հիւանդութիւնն է, որի ժամանակ ողկոյզների երեսը մոխրի պէս ծածկելով, չորացնում ոչընչացնում է նորանց. նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ օտարաբոյս-սունկերից գոյացած բորբոս: Խաղողի այդ հիւանդութիւնը առաջին անգամ երևացել է Անգլիայում 1843 թուականին և հետզհետէ տարածվել է Եւրոպայի միւս կողմերումն էլ: Մեր երկրում, Երևանի նահանգում, երևացել է, կարծեմ, 60-որդ թուերի սկզբներում. այդ ժամանակներից սկսեալ, ինչպէս յայտնի է, աւերում և փչացնում է մեր խաղողի այգիները:

Թողի դէմ մաքառելու ամենահաստատուն միջոցը, ինչպէս ցայժմ արած շատ փորձերից տպացուցվել է, ծծմբային ծաղիկն է (сѣрный цвѣтъ), որով պէտք է սրսկել որթերը: Բայց չը պէտք է մի անգամ սրսկելով բաւականանալ, այլ հարկաւոր է ծծմբի ծաղկով սրսկել որթերը վրա վրա երեք անգամ, այն է՝ առաջին անգամը ծաղկելուց երկու շաբաթ առաջ, որի սկզբումը նախ պէտք է կոորոտել աւելորդ ճիւղերը, երկրորդ անգամը ծաղկելուց 2 շաբաթ յետոյ, իսկ 3 կամ 4 շաբաթ դրանից յետոյ էլ լինում է երրորդ սրսկումը, բայց այդ անգամ սրսկել պէտք է միայն այն թուփերը, որոնց վրա թողի նշաններ երևալու լինեն: Սրսկելու գործողութիւնը կատարվում է սովորական ձեռքի փուքսի միջոցով:

Որքան յայտնի է, մեր Երևանի նահանգում ևս 60-որդ թուականներում փորձ եղաւ որթերը թողից պաշտպանելու համար ծծմբով սրսկելու, բայց դժբաղդաբար մեր ժողովուրդը շատ սառնութեամբ սկսեց այդ բանը և հէնց առաջին անգամից յետոյ դադարեց, իր համար մի համոզմունք կազմած լինելով, թէ այդ թողը Աստուծու ղրկած պատիժն է և նորա երևալուն ոչինչով չէ կարելի արգելել: Ցանկալի կը լիներ որ առողջամիտ և բանիբուն այգեպետերը սկսէին փորձել այդ միջոցի զորձագրութիւնը (ի հարկէ մի երկու տարի շարունակ) և դորա արդիւնքը յայտնէր ի դիտութիւն ընդհանրութեան:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Փետրվարի 25

Շուշեցի իմ բարեկամ տիկիններն և ես ցանկալով անմասն չը մնալ Վանի մեր սուսատանի քոյրերի և եղբայրների օգնութիւնից, ժողովեցինք ինչնուն ռուբլի երեսուն և հինգ կօպ. Այդ գումարն և նուիրատուաց ցուցակն յղելով ընդ սմին, պատիւ ունիմ խնդրել ձեզ մեր այդ լուման հասուցանել ըստ պատկանելոյն և ձեր պատուական թերթի մէջ տպագրել նուիրատուաց անունները. Անանան Եարամիչեանց 2 ր., Մայոյ Քարտանեանց 2 ր., Թագուհի Ղալամեանց 1 ր., Փեփել Ազայեանց 1 ր., Մարգարիտ Ղօնտաղսազեան 1 ր., Մայրապ. Բաճաթուրեանց 1 ր., Կոյս Մարգարիտ 1 ր., Ազիզգիւլ Նախիմեանց 1 ր., Զաուի Շաքարեանց 1 ր., Մանուշակ և Հռիփսիմէ Խանդամիրեան 4 ր., Զաւահիր Ազամալեան 2 ր., Սոփիայ Բաղդասեանց 1 ր., Մարթայ Անանեանց 1 ր., Մինա Քարտանեան 1 ր., Մարիամ Օհանեանց 1 ր., Հուսիկ Օհանեան 1 ր., Հերիքնազ Եարամիչեանց 2 ր., Անթառամ Եարամիչեանց 1 ր., Մարգարիտ Ակէքսանեանց 1 ր., Զաւահիր և իւր հարսները Անագիւլ և Գայանէ Խունունց 10 ր., Զաւահիր և իր հարսն Զաուի Խունունց 13 ր., Հռիփսիմէ Ադամեան 2 ր., Վ. Ա. 1 ր., Աննայ Ամբրումեան 4 ր., Սանամ Ազամալեան 2 ր., Սոփիայ և Սօնիկայ Ազամալեան 1 ր., Աննման Թամիրեան 1 ր., Սօփան Յովսէփեանց 1 ր., Եղիսաբէթ Տէր-Մկրտչեանց 2 ր., Եկատերինա Անանեանց 1 ր., Սօփան Թամիրեան 1 ր., Հռիփսիմէ Միրզոեանց 1 ր., Թագուհի Պատուականեան 2 ր., Մարգարիտ Հաղլաթեանց 4 ր., Թազագիւլ և Մարգարիտ Շեխեանց 2 ր., Փեփրոնիա Իւզբաշեանց 10 ր., Մայոյ Իւզբաշեանց 2 ր., Ա. Իւզբաշեանց 3 ր., Եզիսաբէթ Իւզբաշեանց 1 ր., Այրի կին մի 35 կ., գումարն է 90 ր. 35 կ.

Փեփրոնիա Իւզբաշեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, մարտի 11-ին, դարձեալ ուղարկեցինք Կ. Պօլիս Կիւլպէնկեանի տան ձեռքով, յօգուտ Վանի սովեալների 1000 ռուբլ. Վերջին անգամ փողը ուղարկելուց յետոյ, մնում էր խմբագրութեան մէջ 442 ռուբլ, 42 կ.։ Դրանից յետոյ հաւաքվեցաւ դարձեալ 1271 ր. 30 կ., ուրեմն ընդամենը ունէինք 1713 ր. 42 կ.։ Այդ փողից երէկ 1000 ռուբլ ուղարկելով, մնում է խմբագրութեան մէջ, հանելով 8 ռուբլ 50 կ. երեք հեռագրի ծախսը, մնում է, ուրեմն, այժմ խմբագրատան մէջ 704 ր. 92 կօպ.։ Ուրեմն մինչև այժմ ուղարկեցինք յօգուտ Վանի սովատանջների ընդամենը 13,000 ռուբլ.

—

ԹԻՖԼԻՍԻ մի վաճառական պ. Տէր-Դաւթեանց ուղարկել է մեզ յօգուտ Վանի սովատանջների 30 ր., տիկին Տէր-Դաւթեանց 10 ր. և Հեղինէ Տէր-Դաւթեանց 10 ր., ընդամենը 50 ռուբլ.

—

Յօգուտ Վանի սովատանջների ստացանք 20 ռուբլ Թիֆլիսարնակ հետևեալ անձինքներից. Իվան Ղ. Լազարեանց 6 ր., Ն. Լազարեանց 2 ր., Բաբաջան Լազարեանց 2 ր., Ն. Լազարեանց 2 ր., Ակէքս. Լազարեանց 1 ր., Մ. Զիկնավերեանց 2 ր., Ակէքս. Մամիկոնեան 3 ր., Սարգիս Մեհրաբեանց 2 ր., ընդամենը 20 ռուբլ.

—

Պ. բժիշկ Մերիմանեանից, Կարակուրտից ստացանք յօգուտ Վանի սովատանջների 10 ռուբլ.

—

ԲԱԳՈՒԻՑ պ. Վ. Ն.-ից ստացանք 1 ռուբլ յօգուտ Վանի սովատանջների.

—

Շատ ուրախալի երևոյթ է, որ Վանի սովատանջներին օգնելու գործի մէջ մասնակցում են իրանց կարողութեան չափ թէ մեր բողբական և թէ մեր կաթոլիկ եղբայրները.

—

Պ. Կոզլովի ներկայացման համար, յօգուտ Վանի սովատանջների, որ լինելու է կիրակի օր, մարտի 16-ին, Արծրունու թատրոնում, կարելի է տոմսակներ առնել թէ Արծրունու թատրոնի կասսայում և թէ «Մշակի» խմբագրատան մէջ. Մենք կը յայտնենք մեր հասարակութեանը թէ որ օրից կը սկսեն ծախվել տոմսակները մեր խմբագրատան մէջ.

—

Ստացանք ՄՈՍԿՎԱՅԻՑ պ. Մէլքոն Փանեանցից 60 ռուբլ յօգուտ «Արարատեան» ընկերութեան հետևեալ նամակով. «Այստեղի հայերը ներկայ տարվայ Ծննդեան օրը միմեանց այցելութեան փոխանակ, նուիրած են յօգուտ «Արարատեան» ընկերութեան 60 ռուբլ. Հետևեալ 20 անձինքներից իւրաքանչիւրը վճարած է 3 ռուբլ. Ս. Զանուտեանց, Գ. Լիանոզեանց, Յ. Յովհաննեանց, Ն. Ներսէսեանց, Ս. Շահազիզեանց, Գ. Ղազարոսեանց, Յ. Ժամարեանց, Ի. Ադամեանց, Յ. Զարափեանց, Ս. Միրհաբեանց, Մ. Շամխարեանց, Յ. Վարդազարեանց, Ս. Թումանեանց, Ս. Եղեանց, Լ. Խաղանեանց, Ա. Միրզաբէգեանց, Տ. Էվիզէր, Օրդուխանեանց, Ն. Փիթոյեանց, Մ. Փանեանց.

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են, որ տեղային թեմական դպրանոցում մեծ հանդիսով կատարվել է Ս. Վարդանանց նահատակների յիշատակը. Պ. պ. Բէդնազարեանց, Պաօլեանց և Տէր-Ղևոնդեանց ճառեր են կարդացել այդ տօնի առիթով.

—

Մեզ հաղորդում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ Նորերումս ներկայացրել են «Ալի քաղաքի աւերումն», և «Սանատուկ և Սանդուխտ» ողբերգութիւնները. Ներկայացումները անաչող են անցել.

—

ԱԽԱԼՑԽԱՅԻ գաւառի Ազաւրէթ գիւղից մեզ գրում, են, որ Ռափայէլ քահանայ Բէչեանցը զանազան անկարգութիւններ յարուցանելով, արգելք է լինում տեղային նոր բացված ուսումնարանի յառաջդիմութեանը, ուսուցիչներ հալածելով և այլ կամայականութիւններ գործելով. Հոգևոր իշխանութեան և թեմական տեսչի ուշադրութիւնն ենք դարձնում քահանայի վարմունքի վրա.

—

Խմբագրութեան մէջ ստացվեցան զանազան տեղերից համակրական նամակներ, որոնք մեծ շնորհակալութեամբ վերաբերվում էին դէպի Բագուի հայերի բարեգործական եռանդը, որով նրանք ցոյց տուեցին իրանց կարեկցութիւնը թիւրքաց Հայաստանի մեր սովատանջ եղբայրներին.

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են, որ «Նոր-Արշալոյս» օրիորդական դպրոցը և տեղային միւս դպրոցները, չը նայելով սաստիկ ցրտերին, չէն վառում, այնպէս որ թէ ուսանողներին և թէ ուսուցիչներին անհնարին է լինում պարապել.

—

«Մեղու Հայաստանի» լրագիրը հաւանական աղբիւրներից լսել է, որ Կովկասի հայ-կաթոլիկ ազգաբնակութիւնը խնդիր է ներկայացրել բարձրագոյն իշխանութեան՝ որպէս զի իրաւունք տրուի նրանց զատուել Սարատովի եպիսկոպոսութեան իրաւասութիւնից, ունենալով նորա փոխարէն Կովկասում առանձին հայ-կաթոլիկ եպիսկոպոսութիւն. Տէրութեան ներկայացրած խնդրագիրը, ասում են, ստորագրած են 18,000 հոգի, որոնց թիւում և նոր նուաճված գաւառների հայ-կաթոլիկները.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՐՏՄԱՆԻ ԳՈՐԾԸ

—

Հեռագիրը հաղորդեց, որ Թագաւոր Կայսրի կեանքին նոյեմբերի 19-ին ձեռնամուխ եղող չարագործ Դարման կալանաւորվեցաւ Փարիզում. Ռուսաց կառավարութիւնը պահանջեց նրան Ֆրանսիայից և թէպէտ այդ երկու պետութիւնների մէջ ոչինչ պայմաններ չը կան քաղաքական կամ մասնաւոր յանցաւորներին վերադարձնելու մասին, Ֆրանսիական կառավարութիւնը յայտնեց, որ նա կը յանձնի Դարմանին, եթէ ռուսաց կառավարութիւնը ապացոյցներով կը հաստատի, թէ Դարման նոյն անձնաւորութիւնն է, որ Թագաւորի կեանքի դէմ փորձ է առել: Ռուսաց դեսպանը Փարիզում իշխան Օրլով ստացաւ իր կառավարութենից այդ ապացոյցները և նրանց Ֆրանսիական կառավարութեանը յանձնեց: Ֆրանսիական արդարութեան մինիստր Կազօ այդ ապացոյցները Դարմանի և նոյեմ. 19-ի չարագործի անձնաւորութեան նոյնութիւնը հաստատելու համար բաւականացուցիչ չը գտաւ: Մինիստրի այդ որոշումը յայտնվեցաւ ռուսաց կառավարութեանը և Դարման արձակվեց: Նա խկոյն ուղևորվեցաւ Անգլիա և այժմ այնտեղ է գտնվում: Դարմանի թէ կալանաւորելու, թէ նրա գործի քննութեան, թէ նրա անձնաւորութեան և թէ նրան ազատելու մասին լրագիրները բազմաթիւ յօդուածներ հրատարակեցին:

Դարմանին ազատելու մասին տպված յօդուածներից հետաքրքիր է Ս. Պետերբուրգում Ֆրանսիերէն լեզուով հրատարակվող «Journal de St.-Petersbourg» լրագրի յօդուածը: Մի քանիսները այդ լրագիրը ռուսաց կառավարութեան կիսապաշտօնական թերթ են համարում:

Ահա այդ յօդուածը:

Ֆրանսիական լրագիրները յայտնում են, որ Ֆրանսիական կառավարութիւնը շտապեց շընորհաւորել կոմս Լօրիս-Մելիկովին փետրվարի 20-ին նրա դէմ ուղղված չարագործութենից ազատվելու առիթով: Ի հարկէ մենք չենք կամենում ասել, որ այդ շնորհաւորութեան և նոյեմբերի 19-ի չարագործի ազատման մէջ հակառակութիւն կայ, բայց Ֆրանսիայի գլխաւոր դասակարգերը, որոնք հաւատացնում են, թէ նրանք հետևում են հասարակական կարծիքի ցուցմունքներին և ցանկութիւններին, զուցէ կը համաձայնեն, որ Ռուսաստանն էլ ունի իր սեփական հասարակական կարծիքը: Նոքա կարող են իրանց երկրի հասարակական կարծիքը մերից աւելի լուսաւորված համարել, բայց Ռուսաստանում այնու ամենայնիւ կայ հասարակական կարծիք, ուստի շատ դժուար է համաձայնեցնել վերոյիշեալ շնորհաւորութիւնները նոյեմբերի 19-ին կատարված չարագործութեան մէջ կասկածված անձնի շտապով ազատելու հետ: Հասարակական այդ կարծիքը չէ հասկանում, թէ ի՞նչպէս կարելի է շնորհաւորել մէկին մարդասպանի դիտաւորութենից ազատվելու առիթով և միևնոյն ժամանակ իր ձեռքին ունեցած այդպիսի մի մարդասպանին ազատել: Գուցէ քաղաքականութեան անհասկացողութենից է, բայց ռուս ժողովուրդը հըրաժարվում է հասկանալ, որ գտնվեցաւ Ռուսաստանին բարեկամ քաղաքակրթված մի ժողովուրդ, որ Թագաւորի 25-ամեայ յոբելեանի ժամանակ եղած ցուցումները բաւականացուցիչ ապացոյց չը համարեց այն բանի համար, որ Ռուսաստանում Թագաւորասպանները ոչ թէ քաղաքական մի կուսակցութիւն են կազմում, այլ հասարակութենից մերժված և նրա շրջանից արտաքսված չարագործների մի խումբ են: Ինչքան կամենում էք մանացոյց եղէք Դիւֆօրի շրջաբերականի վրա, ռուս ժողովուրդը այնու ամենայնիւ կը պնդի, որ երբ ձեռքին բռնած ունեն չարագործին, ձեւի և ժամանակամիջոցի դատարկ հարցի պատճառով նրան չեն արձակում: Այնքան զոված քաղաքակրթութիւնը, որով Ֆրանսիան պարծենում է, ռուս ժողովրդին մի տեսակ բարբարոսութիւն է երևում, երբ նա այդպիսի հետևանքների պատճառ է լինում: Ռուս ժողովուրդը այդ հետևանքը համարում է իր կամ իր Թագաւորի դէմ, որ մի և նոյն է, ուղղված թշնամական ցուցմունք:

Մենք շատ ցաւում ենք այդ մասին, բայց չէինք կարող չը վկայել, որ այդ այդպէս է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ